Պետականության ճգնաժամը Հայաստանում: Գործողությունների ծրագիր Հանրապետության Նախագահի համար

Հանրապետության Նախագահը պետության գլուխն է: Նա պարտավոր է ապահովել քաղաքացիների սահմանադրական իրավունքների պահպանումը և իշխանության մարմինների բնականոն աշխատանքը: Նախագահը լիազորված է լինել Հայաստանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը:

Պետականության ճգնաժամը Հայաստանում կարող է հաղթահարվել միայն քաղաքացիական հասարակության և այն քաղաքական ուժերի համատեղ ջանքերով, ովքեր իրականում ընդդիմադիր են իշխող կուսակցությանը և նրա արբանյակներին:

1. Պետության նկատմամբ հասարակության վստահությունը վերականգնելու համար Հանրապետության Նախագահը պարտավոր է քաղաքացիական հասարակության հետ միասին.

- հեռացնել քրեական օլիգարխիային գործադիր և օրենսդիր իշխանությունից,
- ստեղծել սահմանադրական երաշխիք հետագայում ժողովրդավարական կարգը պահպանելու համար,
- սահմանել հասարակական վերահսկողություն ազգային հարստության նկատմամբ:

1.1. Քրեական օլիգարխիային օրենսդիր և գործադիր իշխանություններից հեռացնելու համար անհրաժեշտ է լուծարել այն կուսակցությունները, որոնց միջոցով օլիգարխիան վերահսկում է Ազգային ժողովը և Կառավարությունը: Ակնհայտ է, որ այդ կուսակցությունները ընտրությունների ընթացքում զանգվածաբար կաշառել են ընտրողներին: Ընտրողին կաշառելը քրեական հանցանք է: Ըստ օրենքի, այն կուսակցությունները, որոնք թույլ են տվել Սահմանադրության կոպիտ խախտում, ենթակա են լուծարման: Դրանց լուծարման մասին որոշում է կայացնում Սահմանադրական դատարանը: Գործող սահմանադրական նորմերի համաձայն՝ կուսակցության լուծարման դեպքում դադարեցվում են ազգային ժողովում տվյալ կուսակցության պատգամավորական խմբակցության և կուսակցական ցուցակով ընտրված պատգամավորների լիազորությունները: Այնուհետև, Ազգային ժողովի թափուր տեղերի համար անց են կացվում լրացուցիչ ընտրություններ:

Հանրապետության Նախագահը, ստանձնելով պաշտոնը, պարտավոր է ինքնալուծարման պահանջով դիմել քրեաօլիգարխիայի վերահսկողության տակ գտնվող կուսակցություններին: Եթե հակասահմանադրական կուսակցությունները հրաժարվում են կատարել այդ պահանջը, Հանրապետության Նախագահն իրավունք ունի ստեղծել հատուկ հետաքննչական հանձնաժողով՝ որոշելու ընտրողներին կաշառելու համար այդ կուսակցությունների սահմանադրական պատասխանատվությունը: Հասարակության աջակցությամբ հնարավոր կլինի կարճ ժամկետում հավաքել ապացույցներ այն մասին, որ ընտրական իրավունքի խախտումները եղել են կանխամտածված, նպատակաուղղված,

կանխորոշված և կազմակերպված գործողություններ, որոնցում ուղղակի կամ անուղղակի ներգրավված են եղել այդ կուսակցությունների անդամների մեծ մասը:

Հանրապետության Նախագահն իրավունք ունի դիմել սահմանադրական դատարան՝ ընտրողների զանգվածային կաշառման համար պատասխանատու կուսակցությունների լուծարման պահանջով: Սահմանադրական դատարանը պարտավոր է ուսումնասիրել Սահմանադրության հիմնարար նորմերի խախտումների վերաբերյալ հետաքննող հանձնաժողովի ներկայացրած ապացույցները: Օրենքի համաձայն, դատարանը պետք է իր որոշումը կայացնի Նախագահի դիմումից հետո՝ երեք ամսվա ընթացքում:

Ժողովրդի վստահության Կառավարություն ձևավորելու նպատակով, Հանրապետության Նախագահը պարտավոր է վարչապետի պաշտոնի հավակնորդին որոշելիս երկրում անցկացնել հասարակական կարծիքի հարցում: Եթե Ազգային ժողովի պատգամավորների մեծամասնությունը վստահություն չեն հայտնում վարչապետի տվյալ թեկնածուին, ապա Նախագահը կարող է առաջարկել Ազգային ժողովին՝ որոշում կայացնել վաղաժամկետ արձակման մասին և նշանակել նոր ընտրություններ: Քաղաքացիական հասարակությունը և Նախագահը համատեղ ջանքերով կարող են ապահովել պայմաններ՝ ազատ և ազնիվ ընտրություններ անցկացնելու համար, որոնք թույլ կտան լիովին հեռացնել քրեական օլիգարխիային օրենսդիր և գործադիր իշխանությունից:

1.2. Ժողովրդավարական կարգը հետագայում պաշտպանելու համար սահմանադրական երաշխիքներ ստեղծելու նպատակով անհրաժեշտ է վերանայել Սահմանադրությունը: Գործող Սահմանադրությունը թույլ է տալիս մեկ քաղաքական ուժի (կուսակցության կամ կուսակցությունների միավորման) իր ձեռքում կենտրոնացնել ամբողջ օրենսդիր և գործադիր իշխանությունը, ինչպես նաև՝ վերահսկել դատական իշխանությունը: Նախագահի պաշտոնը զբաղեցնող և պատգամավորական մանդատների մեծամասնությանը տիրող քաղաքական ուժը, ըստ Սահմանադրության, բացառիկ իրավունք է ստանում առաջադրել, նշանակել կամ հաստատել անձանց՝ պետության բոլոր առանցքային պաշտոններում:

Սահմանադրությունն ընդունվում կամ փոփոխություններ է կրում հանրաքվեի միջոցով, Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ: Հանրաքվե նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկով կամ համաձայնությամբ: Քանի որ Նախագահն իրավունք ունի հանրաքվեի դնել նոր Սահմանադրության նախագիծ, նա կարող է պատգամել իր այդ լիազորությունը քաղաքացիներին:

Հանրապետության Նախագահն իր առաջին հրամանով պարտավոր է հրավիրել Սահմանադիր ժողով, հաստատել դրա ընտրման կարգը, լիազորությունները և աշխատակարգը: Սահմանադիր ժողովը կարող է կազմվել 82 պատգամավորից: Հանրապետության Նախագահը Սահմանադիր ժողովում կարող է ունենալ դիտորդի կարգավիճակ և խորհրդակցական ձայնի իրավունք: Սահմանադիր ժողովի 41 պատգամավոր կարող են ընտրվել գործող ընտրատարածքներից, մնացած 41-ը կարող են

նշանակվել Նախագահի կողմից՝ քաղաքացիական հասարակության առաջարկությամբ: Ընտրված Նախագահի կողմից պաշտոն ստանձնելուն նախորդող ժամանակահատվածում քաղաքացիական հասարակությունը կարող է գումարել բաց հասարակական խորհրդաժողով՝ հստակեցնելու իր կողմից առաջարկվող պատվիրակների առաջադրման մեխանիզմները և օրինական ընտրությունը:

Հանրապետության Նախագահը կարող է առաջարկել կնքել Հանրային պայմանագիր, որն իր մեջ կներառի քաղաքացու իրավունքների հռչակագիրը, պետության կառավարման քաղաքական սկզբունքները, պետության կառավարմանն ուղղակի մասնակցելու և դրա նկատմամբ հսկողություն իրականացնելու քաղաքացու պարտավորությունները: Սահմանադիր ժողովի կողմից հաստատվելուց հետո Հանրային պայմանագիրը բաց կլինի բոլոր քաղաքացիների կողմից ստորագրվելու համար: Այն քաղաքացիները, ովքեր կմիանան Հանրային պայմանագրին, իրավունք կստանան հանդես գալ Սահմանադիր ժողովում օրենսդրական նախաձեռնությամբ և ուղղակիորեն մասնակցել նոր Սահմանադրության առանցքային հարցերի վերաբերյալ որոշումների կայացմանը:

1.3. Ազգային հարստության նկատմամբ հասարակական վերահսկողություն սահմանելու համար անհրաժեշտ է.

- իրականացնել հանրային հսկողություն Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաների, նրանց ընտանիքների անդամների և նրանց հետ փոխկապակցված անձանց սեփականության նկատմամբ,

- պետությանը վերադարձնել Երրորդ Հանրապետության գոյության ընթացքում պաշտոնատար անձանց կողմից կոռուպցիոն ճանապարհով կուտակված անօրինական հարստությունը,

- վերանայել երկրի բնական ռեսուրսների, ստրատեգիական ենթակառուցվածքների համակարգերի և օբյեկտների օգտագործման վերաբերյալ բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը, որոնք կնքել է քրեական օլիգարխիան հանուն Երրորդ Հանրապետության,

- հետաքննել Հայաստանի արտաքին պարտքի ձևավորման և միջազգային վարկատուներից ստացված վարկային ռեսուրսների նպատակային օգտագործման հանգամանքները:

Այս գործընթացն իրականացնելու համար Նախագահը պարտավոր է հաստատել լիազորություններ և աշխատակարգ հատուկ հանձնաժողովների համար, որոնց կազմում մեծամասնություն են կազմում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Քաղաքացիական հասարակությունը պետք է հրավիրի բաց խորհրդաժողով և ինքնուրույն որոշի այդ հանձնաժողովներում իր ներկայացուցիչների առաջադրման, ընտրման և հետ կանչման ժողովրդավարական մեխանիզմները: Հատուկ հանձնաժողովների գործունեությունը պետք է բաց լինի հանրության առջև, իսկ հետաքննությունների

արդյունքները պետք է հիմք դառնան պետական իշխանության մարմինների կողմից պարտադիր համապատասխան որոշումներ կայացնելու համար:

Պաշտոնատար անձանց սեփականության նկատմամբ հանրային հսկողություն իրականացնելու իրավական հիմքը գործող Սահմանադրությունն է, որն արգելում է Հանրապետության Նախագահին, Ազգային ժողովի պատգամավորներին և Կառավարության անդամներին զբաղվել ձեռնարկատիրությամբ: Հետևաբար, Նախագահը պարտավոր է Սահմանադրության պահանջով ստեղծել հսկողության այնպիսի մեխանիզմներ, որոնք անվերապահ երաշխիքներ կտան քաղաքացիներին այն մասին, որ պետության ղեկավարներից որևէ մեկը չի կարողանա օգտագործել իր դիրքն անձնական նպատակներով:

Կոռուպցիայի դեմ պայքարի միջազգայնորեն ընդունված չափանիշների համաձայն, պաշտոնատար անձի սեփականության՝ իր օրինական եկամուտները գերազանցող ավելացումը, որն անձը չի կարողանում ողջամիտ հիմնավորել, համարվում է նրա ապօրինի հարստացում: Այս կանոնի կիրառումը հանրապետության գոյության ընթացքում հանրային պաշտոններ զբաղեցրած անձանց նկատմամբ հնարավորություն կտա ի հայտ բերել հարստության ապօրինի կուտակման արդյունք հանդիսացող սեփականությունը:

Անօրինական սեփականության այն տերերին, ովքեր կամովին կընդունեն իրենց մեղքը և կհամագործակցեն հետաքննության ընթացքում, Նախագահն իրավունք ունի առաջարկել այդ սեփականության նկատմամբ սեփականության իրավունքի պահպանում՝ դրա ամբողջ արժեքը հինգ տարվա ընթացքում պետությանը հատուցելու պայմանով: Այս կանոնը չի կարող տարածվել բարձրաստիճան այն պաշտոնյաների վրա, որոնք իշխանության ղեկին գտնվելու ամբողջ ընթացքում թույլ են տվել կոռուպցիոն գործունեություն կամ հանդիսացել են նման գործունեության հովանավոր:

Երկրի բնական ռեսուրսների օգտագործման նկատմամբ ժողովրդի ինքնուրույնությունը պաշտպանող ազգային օրենսդրության և միջազգային իրավունքի նորմերի խախտումները կարող են հինավորում լինել այդ ռեսուրսների, ստրատեգիական ենթակառուցվածքների համակարգերի և օբյեկտների օգտագործման վերաբերյալ՝ բոլոր պայմանագրերի և համաձայնագրերի վերանայման համար: Նման խախտումները կարող են նաև հիմք հանդիսանալ վերանայելու համար արտաքին վարկատուների հետ կնքված պայմանագրերը:

2. Ազգի ներսում պառակտումը վերացնելու համար Հանրապետության Նախագահը պարտավոր է քաղաքական ուժերի հետ միասին.

- հաստատել ազգային եկամտի արդարացի բաշխում,
- ապահովել պայմաններ քաղաքացիների արժանապատիվ կյանքի համար,
- հասնել համազգային միավորման:

2.1. Ազգային եկամուտն արդար բաշխելու համար պետության տնտեսական

քաղաքականությունը պետք է հիմնվի հետևյալ սկզբունքների վրա.

- ընդերքը և չվերականգնվող բնական ռեսուրսները հավասարաչափ պատկանում են ներկա և ապագա սերունդներին, այդ պատճառով ընդերքի և չվերականգնվող բնական ռեսուրսների շահագործումից ստացված ազգային եկամուտը չպետք է դուրս հանվի պետության սահմաններից և բնական ռեսուրսների արդյունահանման արդյունքին համարժեք պետք է կուտակվի որպես ազգային պաշար՝ ոսկե կամ այլ ստրատեգիական պահուստների տեսքով,

- աղքատները չպետք է հարուստներին հավասար հարկեր վճարեն, և քանի դեռ երկրում կա աղքատություն, պետությունը չի կարող հարկել բնակչության սպառողական ծախսերը (ավելացված արժեքի հարկ, շրջանառության հարկ), բացառությամբ պերճանքի առարկաների, ալկոհոլային ապրանքների և ծխախոտի,

- հասարակության տնտեսական գործունեության նպատակն իր նյութական պահանջների բավարարումն է, այդ իսկ պատճառով պետությունը պարտավոր է երաշխավորել յուրաքանչյուր մարդու արդար վարձատրություն և աշխատանքի նորմալ պայմաններ, ինչպես նաև՝ ապահովել միատեսակ պայմաններ աշխատանքային ավելի բարձր աստիճանի առաջ քաշման համար՝ բացառապես աշխատանքային ստաժի և որակավորման հիման վրա,

- հասարակությունն ընդունում է տնտեսական գործունեությունից շահույթ ստանալու մասնավոր ձեռնարկատերերի իրավունքը, երբ մասնավոր ձեռնարկատերերն էլ ընդունում են կայուն զարգացման համար հասարակության առջև իրենց պատասխանատվությունը, այդ պատճառով մասնավոր ձեռնարկատերերի համար ազգային վարկային ռեսուրսների հասանելիությունը պետք է ուղիղ համեմատական լինի շահույթի այն ծավալին, որը նրանք ուղղում են իրենց ձեռնարկությունների զարագացմանը կամ ավանդադրում են ազգային զարգացման ֆոնդերում,

- արտադրական ռեսուրսների ճակատագիրը չի կարող կախված լինել մարդկանց նեղ խմբի կամքից, այդ պատճառով խոշոր ձեռնարկություններն անպայման պետք է լինեն կոլեկտիվ սեփականություն, իսկ քաղաքացիները պետք է ունենան առաջնահերթ հնարավորություն իրենց խնայողությունները ներդնելու ազգային բաժնետիրական ընկերություններում, որոնց գործունեությունը պետք է լինի պետության և հասարակության հսկողության ներքո:

Զարգացման իրավունքը մարդու անքակտելի իրավունքն է, որով յուրաքանչյուր ոք և բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն մասնակցել այնպիսի տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական զարգացման, որի դեպքում կարող են լիովին իրականանալ մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները, ինչպես նաև աջակցել այդ զարգացմանը և օգտվել դրա բարիքներից (Զարգացման իրավուքի մասին ՄԱԿ հռչակագիր, 1980 թ.): Հանրապետության Նախագահը պետք է իշխանության մարմինների գործունեությունն այնպես ուղղորդի, որ պետության տնտեսական քաղաքականության սկզբունքները լիովին ծառայեն յուրաքանչյուր քաղաքացու զարգացման իրավունքի

իրականացմանը:

2.2. Քաղաքացիների արժանապատիվ կյանքի համար պայմաններ ապահովելու նպատակով անհրաժեշտ է կենտրոնացնել պետության, մասնավոր կապիտալի սեփականատերերի և ամբողջ հասարակության ջանքերը: Դրա համար 2013 թվականին Հայաստանում պետք է մշակվի և իրագործվի “2014-2020 թվականների ազգային զարգացման յոթնամյա ծրագիր”, որն անպայման պետք է բովանդակի հետևյալ նպատակները.

- ավելացնել բնակչության թիվը մինչև չորս միլիոն մարդ,
- հասցնել տարեկան համախառն ազգային եկամուտը մինչև 60 միլիարդ ԱՄՆ դոլարի,
- ապահովել աշխատունակ բնակչության լրիվ զբաղվածություն,
- ապահովել քաղաքային բնակարաններով և աշխատանքով քաղաքներում բնակչության 90 տոկոսին,
- բժշկական բոլոր ծառայությունները դարձնել հասանելի ամբողջ բնակչության համար,
- կարիքավոր բնակչության բոլոր կատեգորիաները ներառել արդյունավետ սոցիալական պաշտպանվածության ծրագրերում,
- երաշխավորել բարձրագույն կրթության հասանելիությունը,
- ապահովել անհրաժեշտ պայմաններ բնակչության մշակութային զարգացման համար,
- հասնել լիարժեք պարենային անվտանգությանը,
- ամբողջությամբ փոխարինել ներմուծվող սպառողական ապրանքները և ծառայությունները ազգային արդյունաբերության արտադրանքով,
- ստեղծել գիտատեխնիկական բազա ազգային նորարարական տնտեսության զարգացման համար,
- ընդլայնել անտառածածկույթի մակերեսը մինչև երկրի տարածքի 25 տոկոսը,
- ստեղծել ամբողջովին պրոֆեսիոնալ բանակ,
- ստեղծել Ազգային Գվարդիա՝ որպես Զինված Ուժերի մշտապես գործող պահեստազոր,
- կազմակերպել զենքի ու զինամթերքի հայրենական արտադրություն:

Ազգային զարգացման յոթնամյա ծրագիրը պետք է դառնա պետական, մասնավոր և հասարակական ներդրումների, արտադրության ծավալների, գնագոյացման մեխանիզմների և այլ տնտեսական լուծումների համաձայնեցված ծրագիր, որը հնարավորություն կտա միավորել պետության և մասնավոր ձեռնարկատերերի ջանքերը՝ հասնելու Հայաստանի լրիվ տնտեսական անկախության և ապահովելու արժանապատիվ կյանք երկրի բնակչության համար: Հանրապետության Նախագահը պարտավոր է ապահովել իշխանության մարմինների, պետական հաստատությունների, մասնավոր ձեռնարկատերերի և հասարակության անհրաժեշտ փոխհամագործակցությունը՝ 2013 թվականի ընթացքում այս ծրագրի բոլոր մանրամասների մշակման և համաձայնեցման համար:

2.3. Համազգային միասության հասնելու համար անհրաժեշտ է ստեղծել համազգային իրավական դաշտ, որում սահմանված կլինեն համայն հայության բոլոր հատվածերի իրավունքներն ու պարտականությունները միմյանց նկատմամբ: Այդ նպատակով Հայաստանը պետք է օրինականացնի իր հարաբերությունները Լեռնային Ղարաբաղի հետ և ճանաչի Սփյուռքի քաղաքական կարգավիճակը:

1991 թվականի հոկտեմբերին Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհուրդը, հակառակ օրենքի գերակայության սկզբունքի, ընդունեց Սահմանադրական ակտ Ադրբեջանի պետական անկախության մասին: Ընդ որում, Ադրբեջանի Հանրապետության իշխանություններն

- ինքնակամ ճանապարհով քաղաքացիությունից զրկեցին Ադրբեջանական ԽՍՀ-ում ապրող ԽՍՀՄ քաղաքացիներին,
- խախտեցին նրանց քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները, այդ թվում՝ ԽՍՀՄ օրենսդրությամբ պաշտպանված, իր պետա-իրավական կարգավիճակն ինքնուրույն որոշելու ԼՂԻՄ բնակչության և իր բնօրրանում համահավաք ապրող բնիկ հայ բնակչության իրավունքները,
- զրկեցին Լեռնային Ղարաբաղի ժողովրդին ինքնորոշման իրավունքի իրականացումից, լուծարեցին ԼՂԻՄ-ը, շրջափակեցին Լեռնային Ղարաբաղը և ուժ կիրառեցին ազատության ու անկախության համար պայքարող նրա բնակչության նկատմամբ:

Այսօր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը քաղաքական սուբյեկտ է, որի իրավունքները ճանաչված չեն որևէ պետության կողմից: Հայաստանը, ինչպես և յուրաքանչյուր պետություն, պարտավորություն ունի օգնություն ցուցաբերել այն ժողովուրդներին, որոնք ձգտում են հասնել իրենց ինքնորոշման իրավունքի ճանաչմանը: Այդ պատճառով, ոչ մի պետություն չի կարող վիճարկել Հայաստանի իրավունքը՝ հանդես գալ որպես Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգության երաշխավոր: Ըստ այդմ, Հայաստանն իրավունք ունի և պարտավոր է օրինականացնել իր հարաբերությունները ԼՂՀ հետ: Իրավական կարգավիճակի ճանաչված լինելու յուրաքանչյուր մարդու իրավունքը ճանաչված է յուրաքանչյուր պետության կողմից: ԼՂՀ քաղաքացիների իրավական կարգավիճակի, ինչպես նաև՝ նրանց անքակտելի իրավունքների և ազատությունների ճանաչումը Հայաստանի համար հանդիսանում է միջազգային իրավունքի համաձայն իր պարտավորությունների կատարում: Հայաստանից բացի, այլ պետություններ ևս, օրինակ ԱՄՆ-ն, օգնություն են ցուցաբերում Լեռնային Ղարաբաղին և դա անում են բաց ու օրինական: Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի բնակչության միջև հարաբերությունների չօրինականացվածությունը հակասում է Հայաստանի Սահմանադրությանը: Հետևաբար, այդ հարաբերությունների օրինականացումը հնարավորություն կտա վերացնել համազգային նշանակություն ունեցող հարցում հակասահմանադրական դրությունը և ստեղծել իրավական դաշտ, որը կորոշակիացնի Հայաստանի և ԼՂՀ փոխհարաբերություններում միմյանց իրավունքներն ու պարտականությունները:

Հանրահայտ է, որ Օսմանյան Կայսրությունը 1918 թվականին պարտություն կրեց Առաջին համաշխարհային պատերազմում: Հաղթող տերությունները Հայաստանը ճանաչեցին

անկախ պետություն: Նրանք պահանջեցին Թուրքիայից և Հայաստանից՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում հայ-թուրքական սահմանի հաստատման, այդ սահմանին հարող օտտոմանյան տարածքի ապառազմականացման և Հայաստանին դեպի ծով ելք տրամադրելու մասին հարցերը փոխանցել միջնորդ կողմի՝ Միացյալ Նահանգների նախագահի որոշմանը: 1920 թվականին Թուրքիան ուժով ստիպեց Հայաստանին ճանաչել իր այսօրվա սահմանը և հրաժարվել իր անկախությունից:

Սփյուռքի մեծ մասը 1915 թ. Օսմանյան Կայսրության կողմից զանգվածային բնաջնջումից վերապրած հայերի ժառանգներն են: Օսմանյան Կայսրությունում հայերը համարվում էին այդ պետության բնիկ ժողովուրդը: Այսօր Օսմանյան Կայսրության հայերի ժառանգները տիրապետում են համընդհանուր ճանաչված բնիկ ժողովուրդների իրավունքներին: Հայաստանի Հանրապետությունն ունի քաղաքական, բարոյական և իրավական պարտավորություն՝ հարգել Օսմանյան Կայսրության հայերի ժառանգների իրավունքները: Ըստ այդմ, Հայաստանը պետք է ընդունի, որ Օսմանյան Կայսրության հայերի ժառանգների օրինական իրավունքներին վերաբերող Հանրապետության իշխանությունների որևէ որոշում առանց այդ ժառանգների օրինական ներկայացուցիչների կողմից հաստատման չի կարող իրավական ուժ ունենալ: Դրա համար Հայաստանը պարտավոր է ճանաչել իր պատվիրակներին ընտրելու Սփյուռքի իրավունքը և հնարավորություն տա Հայաստանում ստեղծելու Սփյուռքի ներկայացուցչություն:

Հանրապետության Նախագահը պարտավոր է ապահովել քաղաքական ուժերի համագործակցությունն այնպիսի անհրաժեշտ պետական որոշումներ կայացնելիս, որոնք թույլ կտան ստեղծել համազգային իրավական դաշտ և հավասար հնարավորություն համայն հայության բոլոր մասերի օրինական շահերը պաշտպանելու համար:

3. Պետության արտաքին և ներքին գործերում կարգ հաստատելու համար Հանրապետության Նախագահը պարտավոր է իր անմիջական գործունեությամբ.

- պաշտպանել ազգային շահերը միջազգային հարաբերություններում,
- երաշխավորել հասարակությանը արդարացի իրավակարգի հաստատում,
- ամրացնել երկրի անվտանգությունը:

3.1. Հայաստանի ազգային շահերը միջազգային հարաբերություններում պաշտպանելու համար Հանրապետության Նախագահը պարտավոր է ձևավորել ԵԱՀԿ մասնակից-պետությունների մոտ հստակ պատկերացում, որ Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման և Ադրբեջանի հետ խաղաղության մասին պայմանագրերը չեն կարող ձեռք բերվել այնպիսի փոխզիջման ճանապարհով, որը հիմնված է Հայաստանի կողմից այդ պետությունների այն ինքնիշխան իրավունքների ճանաչման վրա, որոնք իրենք զավթել են ուժի միջոցով 1920 և 1991 թվականներին՝ոտնահարելով միջազգային իրավունքի նորմերը:

Հակամարտության արդար կարգավորումն այժմ անհնար է ԵԱՀԿ հովանու ներքո վարվող բանակցություններում, քանի որ ի սկբանե Ադրբեջանը անօրինաբար իրեն է վերագրել ինքնիշխան իրավունքներ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, որոնց տիրապետումն իր

համար անհնար է ըստ միջազգային իրավունքի: Պետական իշխանության այս բռնազավթումը մոլորեցրել է ադրբեջանական ժողովրդին, հանգեցրել պատերազմի և այժմ լուրջ խոչընդոտ է հանդիսանում մեր ժողովուրդների միջև խաղաղության վերականգնման համար:

Որպեսզի ԵԱՀԿ սկզբունքներն ու նորմերը կիրառելի լինեն հակամարտությունը կարգավորելու համար, Ադրբեջանը պետք է չեղյալ հայտարարի իր ազգային իրավական ակտերի այն դրույթները, որոնք հակասում են միջազգային իրավունքին և խախտում են Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության օրինական իրավունքները: Սա վերաբերում է Ադրբեջանի այն պետական որոշումներին, որոնք ժխտում են Լեռնային Ղարաբաղի բնակչության կողմից իր քաղաքական կարգավիճակն ինքնուրույն որոշելու ԽՍՀՄ օրենսդրությամբ պահպանված իրավունքը:

Հանրահայտ է, որ անցյալ դարի սկզբին Թուրքիան ուժի գործադրմամբ զավթել է ինքնիշխան իրավունքներ հայ ժողովրդի պատմական Հայրենիքի նկատմամբ: Այսօր Հայաստանը և Թուրքիան, ՄԱԿ կանոնադրության համաձայն, պարտավոր են համագործակցել միջազգային հարաբերությունների տարբեր ոլորտներում՝խաղաղության, անվտանգության, միջազգային տնտեսական կայունության և առաջընթացի, ժողովուրդների ընդհանուր բարեկեցության և խտրականությունից զերծ միջազգային համագործակության նպատակով: Այս առումով առկա է 3 հանգուցային հարց, որոնց վերաբերյալ Հայաստանը և Թուրքիան պետք է համաձայնության գան, որպեսզի իրենց հարաբերությունները համապատասխանեցնեն միջազգային իրավունքի պահանջներին:

Առաջին՝ Հայաստանը կարող է համաձայնել Թուրքիայի հետ ազգամիջյան հաշտեցմանն ուղղված միջկառավարական համագործակցության, եթե Թուրքիան ընդունի, որ Օսմանյան Կայսրությունում հայերի ոչնչացումը և տեղահանումը հանդիսացել է հանցագործություն մարդկության դեմ, ինչպես նաև ներողություն խնդրի այդ պետական քաղաքականության զոհերի ժառանգներից՝ ցեղասպանության փաստի հերքմանն ուղղված իր գործողությունների համար:

Երկրորդ՝ Հայաստանը կարող է Թուրքիայի հետ պայմանագիր կնքել գոյություն ունեցող սահմանների անխախտելիության մասին, եթե Թուրքիան ընդունի, որ անցյալում Հայաստանը բռնի ուժի գործադրման արդյունքում զրկվել է անկախությունից ու իր միջազգայնորեն ճանաչված տարածքից և, համաձայն 1982 թվականին ՄԱԿ ընդունած ծովային իրավունքի կոնվենցիայի, Հայաստանին տրամադրի երաշխավորված ելք դեպի ծով և տարանցիկության ազատություն:

Երրորդ՝ Հայաստանը կարող է բարեկամության և համագործակցության հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ, եթե Թուրքիան ընդունի, որ Օսմանյան Կայսրությունից տեղահանված հայ փախստականների ժառանգները կարող են վերադառնալ իրենց պատմական Հայրենիք՝ անվտանգության և արժանապատվության հարգանքի պայմաններում, որպեսզի լիովին օգտվեն բնիկ ժողովրդի բոլոր իրավունքներից, ներառյալ՝ ինքնորոշման իրավունքը, “Բնիկ ժողովուրդների իրավունքների մասին” 2007 թ. ընդունված ՄԱԿ հռչակագրի դրույթներին համապատասխան:

3.2. Հասարակությանն արդար իրավակարգ երաշխավորելու համար Հանրապետության Նախագահը պարտավոր է բարեփոխել իրավապահ մարմինների և դատական համակարգի աշխատանքը: Դրա համար անհրաժեշտ է, որ իրավապահ մարմիններում և դատական համակարգում աշխատեն Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր իրենց գործողություններում ղեկավարվում են բացառապես օրենքի գերակայության սկզբունքով և կոմպետենտ են օրենքի կիրառման հարցերում:

Հանրապետության Նախագահն իրավունք ունի հսկողություն իրականացնել իրավապահ մարմինների և դատական համակարգի գործունեության նկատմամբ: Այս մարմիններում այսօր աշխատում է մի քանի հազար մարդ, որոնց մեծ մասի գործունեությունը չի համապատասխանում անհրաժեշտ չափանիշներին: Հասարակությունը կարող է վստահել պետությանը միայն այն դեպքում, երբ ոստիկանի, քննիչի, դատախազի, դատավորի պաշտոնները զբաղեցնեն այնպիսի անձինք, որոնց ազնվությունը և պրոֆեսիոնալիզմը որևէ կասկած չեն հարուցում:

Վերոնշյալ բոլոր պաշտոնյաները պետք է անցնեն ազնվության ստուգում հատուկ տեխնիկական միջոցների օգնությամբ: Նրանցից յուրաքանչյուրի անհատական գործունեությունը պետք է ստուգվի և ներառվի տվյալների հատուկ բազայում: Ելնելով այն բանից, թե ինչ որոշումներ են կայացրել այդ պաշտոնյաները և ինչպիսին է այդ որոշումների հետագա ճակատագիրը, կգնահատվի նրանց համբավը: Պաշտոնյաների գիտելիքը բացահայտելու նպատակով պետք է համակարգված անցկացվեն որակավորման ստուգումներ, որոնց արդյունքները կլինեն նրանց պաշտոնեական առաջընթացի միակ չափանիշը: Այս պաշտոնյաների աշխատանքի արդյունքը պետք է գտնվի մշտական վերահսկողության ներքո՝ տվյալների ավտոմատ հավաքման և պահպանման համակարգի միջոցով:

Հանրապետության նախագահը պարտավոր է ապահովել իրավապահ մարմինների և դատական համակարգի պաշտոնյաների գործունեության մշտական վերահսկողության մեխանիզմի կայուն աշխատանքը:

3.3. Երկրի անվտանգությունն ամրապնդելու նպատակով Հանրապետության Նախագահը պարտավոր է բարձրացնել պետության պաշտպանունակության աստիճանը և հետախուզական ծառայությունների աշխատանքի արդյունավետությունը: Դրա համար անհրաժեշտ է.

- կարճ ժամկետում բարելավել բարոյական մթնոլորտը Զինված Ուժերի շարքերում,
- բարձրացնել պրոֆեսիոնալիզմի աստիճանը զինված ուժերի անձնակազմի շարքերում,
- բարձրացնել պահեստազորի և քաղաքացիական պաշտպանության որակը,
- պայմաններ ստեղծել հետախուզական գործունեության հնարավորությունների ընդլայնման համար:

Հանրապետության Նախագահը պարտավոր է ամենշաբաթյա այցեր կատարել զորամասեր և ժամանակ անցկացնել անձնակազմի հետ՝ հնարավորություն ստեղծելով սպաների և

զինվորների հետ ուղղակի և անմիջական շփումների: Բանակի մարտունակության բարձրացման նպատակով, անձնակազմի դիտողությունների և առաջարկությունների հիման վրա պետք է վերանայվեն և բարեփոխվեն բանակի գործունեությունը և ներքին կյանքը կարգավորող զինվորական կանոնադրությունները: Մարտական պատրաստության տեսանկյունից բոլոր առանցքային զինվորական պաշտոնները՝ զրահատեխնիկայի, հրետանու, ռմբակոծիչների, հակատանկային համակարգերի անձնակազմերը, ՀՕՊ համակարգը և այլք պետք է համալրվեն պայմանագրային հիմունքներով ներգրավված ռազմական մասնագետներով: Նաև, բացառապես պայմանագրային հիմունքներով պետք է համալրվեն սերժանտական պաշտոնները: Սերժանտական ինստիտուտի դերը պետք է էապես ամրապնդել: Սերժանտական կազմի հեղինակությունը բարձրացնելու նպատակով պետք է ստեղծել Զինված Ուժերի Գլխավոր Սերժանտի պաշտոն: Պահեստազորի և քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը լավագույնս իրականացնելու նպատակով պետք է որակապես բարեփոխել Զինված Ուժերի, պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների միջև գործողությունների համակարգումը:

Ազգային հետախուզական ծառայությունը պետք է ապահովված լինի անհրաժեշտ բոլոր տեխնիկական միջոցներով, որը հնարավորություն կտա ընդլայնել պոտենցիալ հակառակորդի մտադրությունների և գործողությունների մասին երկրի ղեկավարության և բանակի տեղեկացվածության աստիճանը:

Հանրապետության Նախագահը պարտավոր է ծառայել հասարակությանը որպես համազգային ուժերի համակարգող այնպես, որ երկու տարվա ընթացքում մենք կարողանանք հաստատել.

- նոր քաղաքական կարգ պետության մեջ, որը երաշխավորում է յուրաքանչյուր քաղաքացու անվտանգությունը, արժանապատիվ գոյությունը և զարգացման հնարավորությունը,

- նոր տնտեսական կարգ երկրում, որը երաշխավորում է յուրաքանչյուր քաղաքացու մասնակցությունը ազգային եկամտի ստեղծմանը և իր բաժնեմասի արդար տիրապետումը՝ ներդրածին համապատասխան,

- նոր միջազգային կարգ տարածաշրջանում, որը երաշխավորում է յուրաքանչյուր հային պաշտպանություն ռասսայական խտրականությունից և հնարավորություն է ստեղծվում նրա խախտված իրավունքների վերականգնման համար: